**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ**

**«Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի** (**ՎԶՄԲ** 80550-AM) 2016**թ. դեկտեմբերի** 31-**ին ավարտված տարվա և մինչև** 2018**թ. հունիսի** 30-**ը ընկած ժամանակահատվածի** (**ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը**) **աուդիտի իրականացման համար**,

**«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի** (**ՎԶՄԲ** 83880) 2014**թ. օգոստոսի** 6-**ից մինչև** 2016**թ. դեկտեմբերի** 31-**ը ընկած ժամանակահատվածի**, 2017**թ. դեկտեմբերի** 31-**ին ավարտվող և** 2018**թ. դեկտեմբերի** 31-**ին ավարտվող տարիների** (**ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը**) **աուդիտի իրականացման համար**,

**«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի** (**ՎԶՄԲ** 84950) 2015**թ. ապրիլի** 8-**ից մինչև** 2016**թ. դեկտեմբերի** 31-**ը ընկած ժամանակահատվածի**, 2017**թ. դեկտեմբերի** 31-**ին ավարտվող և** 2018**թ. դեկտեմբերի** 31-**ին ավարտվող տարիների աուդիտի իրականացման համար**,

20 հունվար, 2017թ.

**Հայաստանի Հանրապետություն**
**Ծրագրերի անունները՝** « **Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագիր**, **«Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիր**, **«Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիր**
**Խորհրդատվական ծառայություն**, **Նվազագույն գնի վրա հիմնված ընտրություն**
**ՎԶՄԲ Վարկ №**-8055-AM; 83880- AM, 84950- AM
**Ծրագիր** No. P116748, P146199,

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկ «Էլեկտրամատակարարման հուսալիություն», «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում», «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերի համար և նախատեսում է գումարների մի մասն օգտագործել «Էլեկտրամատակարարման հուսալիություն», «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում», «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրերի աուդիտի իրականացման համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնելու վերոնշյալ ժամանակահատվածների համար «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի (ՎԶՄԲ 80550-AM, Ծրագիր No P116748), «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի (ՎԶՄԲ 83880-AM, Ծրագիր No P116748) և «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի (ՎԶՄԲ 84950-AM, Ծրագիր No P146199) ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ծրագրի հաշիվների մատյանը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքն է և այն կազմվում է ծրագրի հետ կապված ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն՝

ա) Ստացված գումարների ամփոփագիր՝ առանձնացված ձևով ներկայացնելով Համաշխարհային բանկից, ծրագրի շրջանակներում այլ դոնորներից ստացված և պետական բյուջեից համաֆինանսավորման գումարները:
բ) Ծրագրի հիմնական բաղադրիչների և ծախսային կատեգորիաների մասով ծախսերի ամփոփագիր՝ ընթացիկ տարվա և մինչև նշված ժամանակահատվածը կատարված ծախսերի մասով:
գ) Գումարների ստացման հայտերի ներկայացման համար օգտագործված ամփոփ հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների ամփոփագիր:
դ) Նպատակային հաշվի քաղվածքներ:
ե) Ծրագրի կուտակված գումարները, բանկային մնացորդները և ծրագրի մյուս ակտիվներն ու պարտավորությունները (եթե այդպիսիք գոյություն ունեն) արտացոլող հաշվապահական հաշվեկշիռ:
զ) Հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու աուդիտորական կազմակերպություններին (Համաշխարհային Բանկի առ 2015թ. հոկտեմբերի 6-ի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համար իրավասու Աուդիտորական Կազմակերպությունների ցանկից՝ Պատվիրատուի երկրի բոլոր աուդիտորական ընկերությունները, իսկ Պատվիրատուի երկրից դուրս՝ միայն ամբողջովին ընդունելի Աուդիտորական ընկերությունները) ներկայացնելու հետաքրքրության հայտ ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված աուդիտորները՝ համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (Աուդիտորական կազմակերպության մասին գրքույկներ, Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ այլ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն) պետք է ներկայացնեն էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակով:

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը՝ 30 միավոր/
- Կազմակերպության փորձը ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող նմանատիպ առաջադրանքներում / առավելագույնը՝ 70 միավոր /

Աուդիտորական կազմակերպությունն ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. հունվարին (վերանայված հուլիս 2014) հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված «Նվազագույն գնի վրա հիմնված ընտրության» մեթոդի համաձայն՝ *Guidelines: Selection and Employment of Consultants by World Bank Borrowers*

Հետաքրքրված խորհրդատուներն ավելի մանրամասն տեղեկություններ կարող են ստանալ աշխատանքային օրերին՝ ժամը 09.00-17.30, զանգահարելով՝ +374 60-72-00-22: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել ստորև նշված հասցեով մինչև 2017թ. փետվարի 3-ը՝ ժամը 12.00:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0084,
Զորավար Անդրանիկի 1,
Գլխավոր տնօրեն՝ պարոն Արթուր Բաղդասարյան
Հեռ: +37410-720010; Ֆաքս: +37410-720121;
էլ.հասցե՝ hvenecvb@gmail.com;